# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՐԻԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 05.01.2026Թ. N ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/05 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Իջևան « 23 » ապրիլի 2026թ.

ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղար Արման Գևորգյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Իջևանի Բենտոնիտշին ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արտյոմ Խեչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածով, և հիմք ընդունելով 05.01.2026թ. թիվ **ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/05** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.16 կետերը, և 02.04.2026թ. թիվ 435-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. *Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը*

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ծավալաթերթով սահմանված աշխատանքների յոթանասուն (70) տոկոսը՝ համաձայն Պայմանագրով նախատեսված օրացուցային գրաֆիկի, աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանվում է 20.09.2026թ.:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

### 2. *Համաձայնագրի գինը և վճարման կարգը*

2.1 Սույն Համաձայնագրով Կապալառուի կողմից կատարված աշխատանքի ընդհանուր գինը կազմում է *102900000 (Մեկ հարյուր երկու միլիոն ինը հարյուր հազար)* ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, որը կազմում է ***Պայմանագրի գնի յոթանասուն տոկոսը***, որի վճարումն իրականացվելու է սույն համաձայնագրի թիվ 1 Հավելվածին՝ Վճարման ժամանակացույցին, համապատասխան: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

### 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, Աշխատանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կազմված՝ 2 էջից, սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

### 4.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ո Ւ |
|---|---|
| ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ | Իջևանի Բենտոնիտշին ԲԲԸ |
| ք. Իջևան, Սահմանադրության 1 | ՀՀ Տավուշի մ. Ազատամուտ համայնք |
| ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ վարչություն | ՀՀ 2476100535030000 |
| 07628257 | Արդշինբանկ ՓԲԸ Իջևանի մ/ճ |
| 900 371 003 204 | ՀՎՀՀ 07600534 |
| _______________ Արման Գևորգյան | _______________ Արտյոմ Խեչյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 1
«23» ապրիլի 2026 թ. կնքված
**ՀՀՏՄ-ՀԲՄԱՇՁԲ-25/05-1 ծածկագրով համաձայնագրի**

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակ (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | |
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45211228/506 | շինարարական աշխատանքներ մանկապարտեզների համար/Սարիգյուղի մանկապարտեզ | 61740000 | 61740000 | 61740000 | 87465000 | 87465000 | 87465000 | 102900000 | 102900000 | 102900000 | 102900000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ**
**ք. Իջևան, Սահմանադրության 1**
**ՀՀ ՖԻՆ ԳՈՐԾ վարչություն**
**07628257**
**900371003204**
------------------------- Արման Ղանդիլյան
**(ստորագրություն)**
Կ.Տ.

**Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ո Ւ**
**Իջևանի Բենտոնիտշին ԲԲԸ**
**ՀՀ Տավուշի մ. Ազատամուտ համայնք**
**Հ/Հ 2476100535030000**
**07600534**
------------------------- Արտյոմ Խեչյան
**(ստորագրություն)**
Կ.Տ.